

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԱՂՎԱՆՔԻ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աղվանքի վարչական բաժանման վերաբերյալ¹ ուսումնասիրողները գործնականում սահմանափակվում են Ամանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ի հաղորդումներով, որը մեզ է հասել ընդարձակ² և համառոտ³ խմբագրություններով:

«Աշխարհացոյց»-ի առկա ձեռագիրը⁴ և հրատարակություններն⁵ ամփոփ քննության են ենթարկվել ուսումնասիրողների կողմից, ինչին մեկ անգամ ևս անդրադառնալը համարում ենք մեր խնդրից դուրս: Սակայն մենք հարցին կանդրադառնանք մեկ այլ մասով՝ ձեռագրերի տարընթերցումների միջոցով նախ վերականգնել Աղվանքի գավառների ճիշտ անվանումները, ապա կատարել ընդարձակ և համառոտ տեքստերի, ինչպես նաև այն հրատարակությունների համեմատություն, որոնք ուսումնասիրողների կողմից արժանացել են բարձր գնահատականին:

Առաջ անցնելով նշենք, որ «Աշխարհացոյց»-ի չորսնառվող համառոտ և ընդարձակ տեքստերը զգալի չափով տարբերվում են մեկը մյուսից և երկուսն իրար միացնելով՝ մոտավորապես են արտացոլում Աղվանքի գավառների ընդհանուր պատկերը: Այդ առումով Յ. Մանանդյանը համեմատելով ընդարձակ և համառոտ տեքստերը իրավամբ գտնում է. «Սուքրայի հրատարակած բնագրի համեմատությունը համառոտի հետ պարզ ցույց է տալիս, որ տպագրված երկու հրատարակություններն էլ համառոտված են «Աշխարհացոյց»-ի նախնական ընդարձակ բնագրից, որոնք ծագում են հնագույն մայր բնագրից»⁶: Եվ ավելացնենք, որ երկուսն էլ դարերի ընթացքում արտագրողների կողմից ենթարկվել են փոփոխությունների: Դժբախտաբար մենք հնարավորություն չունենք ծանոթանալու ընդարձակ խմբագրության ձեռագրի հետ, որը պահվում է Վենետիկի

¹ Աղվանքի վարչական բաժանման խնդիրներին կանդրադառնանք առաջիկայում առանձին հոդվածով:

² «Աշխարհացոյց Սովսեսի հորենացույ յաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881:

³ Патканов К., Армянская география VII века, no p. СПб, 1877.

⁴ Աբրահամյան Ա., հորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը, Երևան, 1940, էջ 9-20:

⁵ Մանանդյան Յ., հորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934, էջ 9-82: Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001, էջ 5-40: Վարդանյան Ա., «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրության համառոտ պատմություն, Հայոց պատմության հարցեր, N 9, էջ 23-36:

⁶ Մանանդյան Յ., հորենացու առեղծվածի լուծումը, էջ 15:

Մխիթարյանների մատենադարանում N 1245 թվահամարով, իսկ Զ. Պատկան-
յանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի⁷ ռուսերեն տարբերակի հիմքում ընկած
է 1843թ. Վենետիկյան հրատարակությունը⁸ և դրանով էլ հետագայում առաջ-
նորդվել են ուսումնասիրողները: Մենք մեր աշխատանքի ընթացքում առաջ-
նորդվել ենք 1881թ. Սուբրյանի հրատարակությամբ, սակայն նպատակահար-
մար ենք գտնում օգտվելու նաև Ա. Աբրահամյանի կողմից հրատարակված
մատենագրությունից⁹, որին հիմք է ծառայել Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի N 582 ձեռագրի «Աշխարհացոյց»-ի տեքստը¹⁰: Այն ուսում-
նասիրողներն ավելի ընտիր տեքստ են համարում, քան «Աշխարհացոյց»-ի
համառոտ խմբագրությանը պատկանող և հրատարակված որևէ այլ տեքստ¹¹:
Այդ տեսակետի օգտին է խոսում N 582 ձեռագիր և 1881թ. Վենետիկյան
հրատարակության համեմատությունը: Ճիշտ է ինչպես վերը նշել ենք, մենք
չունենք ընդարձակ տեքստի ձեռագիրը, սակայն կարծում ենք, որ Ա. Սուբրյանը
նույնությամբ հրատարակել է N 1245 ձեռագիրը: Եվ ուսումնասիրողները,
մասնավորապես Ս. Երեմյանը իր մեծարժեք ուսումնասիրությունում¹² և՛ Ա.
Աբրահամյանը «Աշխարհացոյց»-ի աշխարհաբար թարգմանությունում¹³ ընդար-
ձակ տեքստերում գոյություն ունեցող այդ թերությունը, մասնավորապես
Աղվանքի վերաբերյալ, լրացրել են՝ օգտագործելով համառոտ խմբագրու-
թյունը ընդարձակից տարբերակելով փակագծերով:

«Աշխարհացոյց»-ի համառոտ և ընդարձակ տեքստերում տարբերու-
թյունը այնքան մեծ է, որը մենք նպատակահարմար համարեցինք այն ներկա-
յացնել: Ընդարձակ խմբագրությունում Անանիա Շիրակացին տալով Աղվանքի
աշխարհագրական սահմանները, անցնում է գավառների տեղադրությանը,
մասնավորապես նշելով. «Նախ առ Վրօք Եխնի գաւառ առ Աղուան գետովն, եւ
Քամբէճան առ Կուրաւ. եւ ըստ հարաւոյ նորա բերդն Վարագմանաւառ, հան-
դերծ Կուղրաթ գեղաքաղաքաւ, եւ վայրքն անապատ մինչեւ ցԿուր գետ. յորոյ
յեկից կողմանէ Գուգաւ քաղաք, առ Աղուան գետով, եւ Բիխ գաւառ առ
Կաւկասաւ, եւ յեկից նորա Շաքէ, եւ Դէգառու գետ. առ որով հոմանուն գաւառ
առ Սանի գետով: Այս ամայն հոսին ի Կովկասայ, եւ խառնեալ ի յԱղուան գետ

⁷ Патканов К., Армянская География. VII в.

⁸ Սրբոյ Զօրն Մեռոյ Սովսեսի Խորենացիոյ մատենագրութիինք (այսուհետև՝ Մատենա-
գրություն), Վենետիկ, 1843:

⁹ Անանիա Շիրակացու Մատենագրությունը, (այսուհետև՝ Մատենագրություն), Ա.
Աբրահամյան, Երևան, 1944:

¹⁰ Ս. Ս. ձեռագիր N 582, ք. 177^թ, 178^ա:

¹¹ Մատենագրություն, Երևան, 1944, էջ 336:

¹² Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 105:

¹³ Մատենագրություն, Երևան, 1979, էջ 291:

անկանի ի Կուր գետ. իսկ ի յերից կուսէ Քավաղակ քաղաք Աղուանից մերծ ի Կակաս. ընդ որոյ մեջ գետն Սեբոջ դեպ ի հարաւոյ ըստ Փոքր Հայոց»¹⁴: Սա ընդարձակ խմբագրության այն ամբողջական մասն է, որտեղ տրված է Աղվանքի հինգ գավառների նկարագրությունը:

Իսկ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունը պատկերող N 582 ձեռագիրն ունի հետևյալ պատկերը. «Եխնի, Բիխ, Քամբեճան, Հոդմազ, Շաքէ, Գեգաւու, Ոստան, Հաբանդ, Ի մարծ, Պանան, Քաղաց դաշտ, Իբազկան»¹⁵:

Ինչպես տեսանք ընդարձակ խմբագրության տեքստում Աղվանքի գավառների տեղագրությունն ավելի մանրամասն է տրված, քան համառոտ տեքստում, սակայն N 582 ձեռագրի համառոտ տեքստն ունի այն առավելությունը, որ մեզ է հասցնում Աղվանքի գավառների ամբողջական կազմը, ինչը չկա թե Ա. Սուբրյանի հրատարակած ընդարձակ տեքստում, թե Զ. Պատկանյանի կողմից ռուսերեն հրատարակած «Աշխարհացոյց»-ի տեքստում, որտեղ հիշատակվում են Աղվանքի վեց գավառները, այն է Եխնի, Քամբեճան, Շաքէ, Ոստան-Մարծպան, Ղաշտի Բալասական¹⁶:

Եվ մենք այստեղ կանրադառնանք այն գավառներին, որոնք չեն հիշատակվում ընդարձակ խմբագրությունում, իսկ տեղագրությանը կանրադառնանք առանձին:

N 582 ձեռագրում և նրանց արտատպված Սատենագրությունում ինչպես տեսանք հիշատակվում է Աղվանքի 12 գավառ: Որպես առանձին գավառներ են հիշատակվում Ոստան, Ի մարծ և Պանան¹⁷, ինչի հետևանքով Աղվանքի գավառների թիվը ավելանում է հասնելով 12-ի: Գուցե կարճ ժամանակով վերը հիշյալ երեք գավառները առանձին-առանձին են եղել և հետագայում կազմել մեկ գավառ, այսօր դժվար է ասել: Մինչդեռ, համառոտ մյուս ձեռագրերի համեմատության շնորհիվ երեք գավառների փոխարեն հանդես է եկել մեկ գավառ՝ Ոստան-ի-Մարզպան գավառը:

Նույն տեղում հիշատակվում է Հաբանդը Աղվանքի գավառների շարքում¹⁸, որը Ա. Երեմյանը տեղադրում է Շամախի շրջանում¹⁹: Սակայն կարծում ենք, որ Աղվանքը երբեք Հաբանդ անունով գավառ չի ունեցել և այդ անունը «Աշխարհացոյց»-ում ներմուծվել է հետագայում արտագրողների կողմից, որոնք աշխարհագրական հին անունները հասկանալի դարձնելու նպատակով

¹⁴ Աշխարհացոյց, էջ 29:

¹⁵ Ս. Ս. ձեռագիր N 582, ք. 177բ:

¹⁶ Патканов К., Армянская География, с. 40.

¹⁷ Ս. Ս. ձեռագիր N 582, ք. 177բ:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62:

փոխարինել են նորերով և անծանոթ տեղանունների մեջ սխալներ են թույլ տվել՝ շփոթելով Հաբանդը Սյունիքի Հաբանդ և Արցախի Սիւս Հաբանդ գավառների հետ:

Իսկ եթե նշենք, որ արտագրողները Հաբանդը շփոթել են Համբասի գավառի հետ, ապա կարծում ենք, որ ճշմարտությունից հեռու չենք լինի:

N 528 ձեռագրում և Մատենագրությունում չի հիշատակվում «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում տեղ գտած Դեդառու գավառը Սանի գետի վրա²⁰, որի փոխարեն հիշատակվում է երեք առանձին գավառներ, որոնք Ոստան-ի-Մարգպան գավառն է, ինչին մենք անդրադարձել ենք: Եթե N 582 ձեռագրում և Մատենագրությունում առկա Ոստան, Ի մարծ և Պանան «գավառները» միացնում ենք և ավելացնում ենք Համբասի և Դեդառու գավառները, ապա Աղվանքի գավառների թիվը հասնում է 11-ի:

Իսկ ինչ վերաբերվում է «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությանը և Բ. Պատկանյանի համառոտ խմբագրության հրատարակություններին, ապա ռուսերեն թարգմանությունում հիշատակվում է Դաշտ ի Բալասական գավառը²¹, ինչը չկա ընդարձակ խմբագրության մեջ: Ինչպես նշել ենք, Բ. Պատկանյանի թարգմանությանը հիմք ծառայած Վենետիկյան համառոտ հրատարակությունում նույնպես հիշատակվում է նույն ձևով²²: Սակայն Բ. Պատկանյանը ծանոթագրությունում նշում է, որ Սեն-Մարտենի մոտ Դաշտ ի Բալասականը հիշատակվում է Ի Բազկան ձևով²³: Սա հետագայում, ինչպես կտեսնենք, ուսումնասիրողների մոտ ընդհանուր ընդունելություն գտավ²⁴: Բ. Պատկանյանի համառոտ խմբագրությունում հիշատակվում է նաև Ոստան-ի-Մարծպան գավառը, ինչը պակասում է ընդարձակ խմբագրությունում: Իսկ այստեղ ինչպես նշել ենք կա Դեդառու գավառը, որը չկա Բ. Պատկանյանի համառոտ տեքստում:

Այսպիսով «Աշխարհացոյց»-ի թե ընդարձակ, թե համառոտ տեքստերը ամբողջական չեն: Կարծում ենք, որ ընդարձակ խմբագրության տեքստը ուշ ժամանակներում ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների, արտագրողների կողմից մի շարք հատվածներ դուրս են թողնվել, ինչը պահպանվել է համառոտ տեքստում: Ա. Աբրահամյանը ենթադրում է, որ Սուբրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի խմբագրող հեղինակը օգտագործել է «Աշխարհացոյց»-ի

²⁰ Աշխարհացոյց, էջ 29:

²¹ Патканов К., Армянская География, с. 40.

²² Մատենագրություն, 1843, էջ 606:

²³ Патканов К., Армянская География, с. 41, пр. 6.

²⁴ Տես, Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 42-43:

համառոտ խմբագրության սխալաշատ մի օրինակ²⁵։ Այդ տեսակետին հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ Վենետիկյան խմբի «Աշխարհացոյց»-ի տեքստում եղած գրչական սխալները կրկնվում են նաև Սուրբյանի «Աշխարհացոյց»-ի տեքստում²⁶։

Մենք չենք կարող օգտվել ընդարձակ խմբագրության միակ ձեռագրից և դրա համար էլ չենք կարող ժխտել կամ կողմ արտահայտվել Ա. Աբրահամյանի տեսակետին։ Սակայն աներկբա է այն հանգամանքը, որ Ա. Սուրբյանի կողմից հրատարակված ընդարձակ խմբագրության տեքստն իր թերություններով հանդերձ, որում մեծ բաժին ունեն արտագրողները, լրացնելով համառոտ տեքստին, հնարավորություն կտա ուսումնասիրողներին ամբողջությամբ վերականգնելու «Աշխարհացոյց»-ի նախնական բնագիրը։

Իսկ ինչ վերաբերվում է «Աշխարհացոյց»-ի համառոտ N 582 ձեռագրին, ապա կարծում ենք, որ մեզ հասած համառոտ տեքստերի մեջ այն լավագույնն է։ Սակայն ժամանակի ընթացքում գրիչների կողմից ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների, բնագրի վրա հատվածներ են ավելացել, բարդ թվացող հատվածները կրճատվել, ունի վրիպակներ և սխալ ընթերցումներ, սակայն դրանով հանդերձ «Աշխարհացոյց»-ի համառոտ ձեռագրի մեջ այն ինքնատիպ է և արժեքավոր։

Սակայն չբավարարվելով միայն N 582 ձեռագրի և ընդարձակ խմբագրության տեքստում Աղվանքի գավառների վերաբերյալ հաղորդումներով, մենք կփորձենք օգտագործել Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում պահպանված «Աշխարհացոյց»-ի տեքստերը՝ փորձելով ստանալ տարընթերցումների հետևյալ պատկերը, որից ընտրել ենք հավանական ճիշտ ձևերը։

Տարընթերցումներ

Ճիշտ ձևը

1. Եխնի, Խնի²⁷
2. Բեխ, Նիբուխ, Բիխ, Բէխ, Բիղամ²⁸
3. Շաքէ, Շաքի, Շաղ²⁹
4. Կամբեճան, Քանբիճան, Քամբեճան,

Եխնի
Բեխ
Շաքէ

²⁵ Աբրահամյան Ա., Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջ, էջ 23-24։

²⁶ Նույն տեղում։

²⁷ Մ. Մ. ձեռ. N 3160, էջ 283^ա, ձեռ. N 582, էջ 177^բ։

²⁸ Մ. Մ. ձեռ. N 3941, էջ 280^բ, ձեռ. 1864, էջ 284^բ, ձեռ., 2370, էջ 256^ա, ձեռ., N 5120, էջ 97^ա, ձեռ. 5613, էջ 291^բ։

²⁹ Մ. Մ. ձեռ. N 696, էջ 93^բ, ձեռ. N 4284, էջ 34^բ, ձեռ. N 7993, էջ 95^բ։

Քանրիճան, Քանթեճան, Ամբեճան ³⁰	Կանթեճան
5. Ոստեան ի մարծպան, Ոստանի մարծպան, Ոստան Մարծպանան, Ոստան մարզպան, Մարզպանան, Ոստանիմարծ, Ի մարծպան, Ոստան ի մարծ պանան, Մարծպանան ³¹	Ոստան-ի-Մարզպան Գեղավու Գետառու
6. Գեգաու, Գաւաղէ, Գեգաու ³²	
7. Գեգաու, Դեղաւու, Դեղառու, Դեգաւուղէ ³³	
8. Հողմաց, Հողմաղաշէ, Հողմաղ, Խողմաղ, Խողմախ ³⁴	Հողմաղ
9. Համբասի, Համբաղի, Համբաղ ³⁵ , Համբասի	
10. Քաղաց դաշտ, Քաղաղաշտ, աղաղաշտ ³⁶	Քաղաղաշտ
11. Բազկան, Դաշտի Բալասկան, ի Բաղական, Իբազկան, Ի Բաղական, Իայբաղական ³⁷	Բազկան

Մենք փորձեցինք տարընթերցումների միջոցով, հենվելով «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում պահպանված հաղորդումների վրա, ընտրել ճիշտ տարբերակներ: Սակայն կարծում ենք, որ ամեն ինչ չէ, որ պարզ է: Ինչպես նշել ենք «Աշխարհացոյց»-ի ձեռագրերը մեկը մյուսից տարբերվում են և հնարավորություն չեն ընձեռում լիովին վերականգնելու Աղվանքի նահանգների ճիշտ անվանումները: Այսպիսով ըստ «Աշխարհացոյց»-ի Աղվանքի գավառների թիվը հասնում է 11-ի:

³⁰ Մ. Ս. ձեռ. N 1717, էջ 167^բ-165^ա, ձեռ. 1864, էջ 284^բ, ձեռ. N 1883, էջ 152^ա, ձեռ. N 1898, էջ 268^բ, ձեռ. N 2370, էջ 256^ա, ձեռ. 3502, էջ 214^բ:

³¹ Մ. Ս. ձեռ. N 696, էջ 93^բ, ձեռ. N 1267, էջ 357^ա-358^բ, ձեռ. 1864, էջ 284^բ, ձեռ. N 1883, էջ 152^ա, ձեռ. N 1898, էջ 268^բ, ձեռ. N 2019, էջ 292^բ, ձեռ. N 2191, էջ 108^ա, ձեռ. N 4284, էջ 34^բ, ձեռ. N 7993, էջ 95^բ-96^ա:

³² Մ. Ս. ձեռ. N 1717, էջ 164^բ-165^ա, ձեռ. N 2370, էջ 256^ա, ձեռ. N 5613, էջ 291^բ:

³³ Մ. Ս. ձեռ. N 582, էջ 177^բ, ձեռ. N 1883, էջ 152^ա, ձեռ. N 1898, էջ 268^բ, ձեռ. N 4284, էջ 34^բ:

³⁴ Մ. Ս. ձեռ. N 582, էջ 177^բ, ձեռ. N 1717, էջ 164^բ-165^ա, ձեռ. N 1883, էջ 152^ա, ձեռ. N 2370, էջ 256^ա, ձեռ. N 4284, էջ 34^բ:

³⁵ Մ. Ս. ձեռ. N 582, էջ 177^բ, ձեռ. N 1864, էջ 284^բ, ձեռ. N 4284, էջ 34^բ:

³⁶ Մ. Ս. ձեռ. N 1864, էջ 284^բ, ձեռ. N 3160, էջ 283^ա, ձեռ. N 4284, էջ 34^բ:

³⁷ Մ. Ս. ձեռ. N 582, էջ 177^բ, ձեռ. N 1486, էջ 101^ա, ձեռ. N 1717, էջ 164^բ-165^ա, ձեռ. N 1898, էջ 268^բ, ձեռ. N 4284, էջ 34^բ, ձեռ. N 5613, էջ 291^բ: